

**ՏԵՔՍՍԱՅԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԿՈՐՅՈՒՆ**

Բանալի բառեր – Մանուկ Աբեղյան, Դանիել Եպիսկոպոս, Կորյուն, ծաղկեցուցանել, գյուտ, գտնել, նորոգ, տեքստ

Լեզվի տեքստային դրսևորումները իրականության պատկերը ներկայացնելուն զուգընթաց նաև փորձում են կրճատել իրենց և այդ իրականության միջև անընդհատ առաջացող անջրպետը:

Պատմագրական փաստերի պակասի պատճառով Մովսես Խորենացին ստիպված դիմեց կոլեկտիվ ստեղծագործությունների՝ բանահյուսական տեքստերի օգնությանը, բայց, մեր խորին համոզմամբ, պատմիչն այդ տեքստերում՝ բանաստեղծություն, առասպել և այլն, ամեննին էլ պատմագրական փաստերի ճշգրտություն չէ, որ փնտրում էր. նա նախ պատմության ճշմարտացիություն էր որոնում, այլապես կանտեսեր առասպելներն ու գողթան երգերը: Անհատական և բանահյուսական տեքստերի միջև եղած տարբերություններից մեկն այն է, որ առաջիններում ճնշող նշանակություն ունեն փաստերը, մինչդեռ կոլեկտիվ տեքստը քանակով անբավարար փաստերի միջև ընկած դատարկ տարածությունը փորձում է լրացնել ճշմարտացիությամբ և տրամաբանականությամբ: Անհատական տեքստերը կարող են հարուստ լինել փաստերով, բայց սուբյեկտիվ «տրամաբանության» պատճառով այդ փաստերը կարող են հեռու լինել ճշմարտությունից ու ճշմարտացիությունից: Կոլեկտիվ տեքստերը առավել մեծ թվով անհատների, սերունդների վերահսկողության շնորհիվ ճշմարտացիության մեծ պաշար են ամբարում: Այսպիսով՝ ճշմարտությանն ավելի մոտ լինելու համար նախապատվությունը պետք է տալ ոչ թե պատմիչին, այլ ասացող-բանաստեղծին, այսինքն՝ ավելի շատ բանահյուսական, քան պատմագրական տեքստին: Ցավոք, հայ ժողովրդի պատմության կարևոր իրադարձություններից մեկի՝ գրերի ստեղծման խնդրի վերաբերյալ պահպանվել է ականատես-անհատի հեղինակած մեկ տեքստ՝ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը: Իսկ թե որքան է վերջինիս պարունակած տեղեկությունների միջանկյալ տարածքում եղած ճշմարտացիության աստիճանը, փորձենք պարզել՝ քննելով այդ տեքստի տրամաբանականությունը: Արդյունքի հասնելու համար նախ անհրաժեշտ է այդ տեղեկություններն ընկալել տվյալ տեքստի գուտ լեզվախոսքային իրողությունների հյուսվածքում՝ կատարելով լեզվաբանական, հոգեբանական,

տրամաբանական վերլուծություններ, այնուհետև այդ ընկալման օգնությամբ տրամաբանել նաև այն պատմական իրադարձությունը, որի մասին «սյուբյեկտիվորեն» խոսում է հիշյալ տեքստը: Տեքստի լեզվաբանական ուսումնասիրությունն ըստ էության «միավորում է լեզվաբանական, հոգեբանական ու տրամաբանական մոտեցումները տեքստի վերլուծության մեջ՝ դիտելով տեքստը իր միավորների (նախադասությունների) կապակցության արտահայտության միջոցների ու բովանդակության պլանների միասնության մեջ»¹:

Առանց շփոթելու լեզվատեքստային և պատմական իրողությունները՝ մենք փորձելու ենք քննել, թե տվյալ իրադարձությունը պատմող տեքստից տեքստային իրականությունից, ինչպես պետք է տրամաբանել՝ հասկանալու համար պատմական իրականությունը:

Եթե նկատի ունենանք, որ հիմնախնդրի վերաբերյալ տեղեկություններ ենք ստացել ոչ թե միջնորդավորված ճանապարհներով, այլ ուղղակի Մեսրոպ Մաշտոցի աշակերտից՝ Կորյունից, որ անմիջական մասնակիցն է եղել պատմական տվյալ դրվագի, ապա թվում է՝ գոնե այսպես ասած փաստերի ճշգրտության վերաբերյալ ոչ մի կասկած չպետք է առաջանար: Սակայն հիմնախնդրի փաստական կողմին վերաբերող տարակարծությունների հիմքեր կան, և, ցավոք, դրանց պատճառը ոչ թե հիշյալ միջնորդավորված ճանապարհներով մեզ հասած տեքստերն են, այլ գրի մասին ուղղակիորեն պատմող Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը: Դրան թերևս նպաստել է նաև այն, որ Կորյունն իր աշխատությունը երանելի ուսուցչի կյանքի ու մահվան մասին գրել է տասնյակ տարիներ անց այն թվականից, որը պաշտոնական տեսակետը համարում է հայ գրերի գյուտի տարի՝ 405 թ.:

Կորյունի վարքագրության տեքստային-փաստական, տեքստային-հոգեբանական ու տեքստային-տրամաբանական քննությունների կարիքն իրոք կա նաև այն պատճառով, որ Կորյունը խոստովանում է, որ «...մինչ դեռ անդէն ի խորհրդանոցի մտացս **վասն յուշ արկանելոյ** միայնագործ հոգայի...»², այսինքն՝ ինքը հիշելու համար մտքերի խորհրդի մեջ էր, այսինքն՝ ոչ թե առիթը ներկայացել է, և ինքն էլ պարզապես հիշում է, այլ իրադարձություններն ու դեպքերը միտքը գցելու՝ արկանելու համար բավականին մեծ ջանքեր է գործադրում («միայնագործ հոգայի...»): **Հոգայ** բառի առաջին իմաստն է՝ «մտածմունքի մեջ ընկնել, տխրել, մտատանջվել, հոգսերից ճնշվել»³: Նման

¹ Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 42:

² Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը՝ ձեռագրական ընթերցվածներով, թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մանուկ Աբեղյանի, Երևան, 1990, էջ 70: Այնուհետև սույն գրքից կատարվող մեջբերումների հղումները կտրվեն տեքստում՝ փակագծերում նշելով համապատասխան էջը:

³ Խաչատրյան Լ., Գրաբարի ուսումնական բառարան, Երևան, 2013, էջ 213:

սկիզբը ստիպում է Կորյունի տեքստին վերաբերվել մշտառկա զգուշավորությամբ:

Անուշադրության չպետք է մատնել նաև նույն տեղում Կորյունի՝ «**մատենանշան ծաղկեցուցանելու**» (էջ 70), այսինքն՝ նաև գեղեցկացնելու, զարդարելու մտադրության խոստովանությունը: «**Ծաղկեցուցանելու**» հոգեբանական ատաղձը տվյալ դեպքում տեղեկացվածության պակաս է ենթադրում, և կասկած է առաջանում, որ ի սկզբանե նման մտադրության առկայությամբ Կորյունն իր հաղորդած փաստերը գուցե երբեմն, գուցե և հաճախ կարող էր գեղեցկացնել, ծաղկեցնել, այսինքն՝ հեռացնել ճշգրտությունից:

Վարքագրության 5-րդ գլխի տեքստում պատմվում է աստվածային գործի՝ քրիստոնեության տարածման միաբանների խորհուրդ ժողովելու մասին, ինչի արդյունքը պետք է լիներ «**ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել**» (էջ 90): Բառացի՝ պետք է խորհրդի հավաքվելին **հայ ազգի նշանագրերը գտնելու** նպատակով, քանի որ *գիւտ* բառը գրաբարում նախ նշանակում է «1. գտնուելը՝ կորած կամ փնտրած իրի: 2. Հնարք, ճարտարություն: 3. Դիպուածով՝ աշխատութեամբ կամ հնարագիտութեամբ գտնուած՝ յայտնաբերուած բան»¹: *Գիւտ* բառի՝ *գտնելու*, *աշխատանքով հայտնաբերելու* մեջբերված իմաստներն են գործում Կորյունի տեքստի տրամաբանական շարունակության մեջ. «Բազում հարցուփորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց» (էջ 90): Ասել է թե հայ ազգի գրերը **գտնելու** (և ոչ թե **գյուտարարության** համար) միաբանյալները զբաղվեցին, աշխատեցին՝ շատ հարցուփորձեր անելով, քննությամբ ու փնտրտութեամբ, շատ նեղություններ կրելով: Ի՞նչ «**հարցուփորձի**», ի՞նչ «**քննութեան**» ու փնտրտութեամբ - չարչարանքի մասին է խոսքը: Հարցուփորձով, փնտրելով **գյուտ չես անի, այլ կգտնես**: Համենայնդեպս, *հարցուփորձ* բառը և երևույթը ոչ մի կապ չունեն գիտական հայտնագործության հետ, մանավանդ երբ դա անում է ոչ թե անհատը, այլ մարդկանց խումբը: Կորյունը գրում է և խոստովանում, որ իրենց փնտրած (*խնդրելի*) բանի մասին երանելիները հայտնում են Վռամշապուհ արքային: Իսկ թե ինչու են երանելի հոգաբարձուները փնտրտութի, հարցուփորձի մասին հայտնում նաև արքային, այլ խնդիր է: Համենայնդեպս, արքան ինչ-որ բանի տեղյակ է կամ պետք է որ տեղյակ լինի, և Կորյունի տեքստի հաջորդ հատվածն ապացուցում է դա. «Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ, յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղիաբետաց հայերէն լեզուի» (էջ 90):

Անշափ կարևոր մի դիտարկում. հայ հին նշանագրերի վերաբերյալ Վռամշապուհ արքայի հաղորդած տեղեկության մասին պատմող տեքստա-

¹ **Ղազարեան Ռ.**, Գրաբարի բառարան, Երևան, 2000, հ. 1, էջ 330:

յին հատվածում պահի բացառիկության և արքայի ու երանելիների ներաշխարհում այդ պահին նկատվող սովորական հոգեվիճակի միջև վիճակային-հոգեբանական բացահայտ անհամապատասխանություն կա. **«բազում հարցուփորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ»**-ով փնտրածի հանկարծահայտությունը երանելիների հոգիներում որևէ զարմանք, ուրախություն, ոգևորություն չեն առաջացնում. նրանք հայտնում են Վռամշապուհին, որ իրենք հայ **նշանագրերը գտնելուն են ուզում հասնել**, ու այդ ժամանակ էլ՝ **«յայնժամ»**, արքան նրանց պատմում է մի ասորի եպիսկոպոս ազնվական մարդու մասին: Ստացվում է, որ Դանիելը **հանկարծ** է գտել հայ նշանագրերը, և տպավորությունն այն է, որ հանկարծակի գտածը Վռամշապուհի համար ամենևին էլ անակնալ, նույնիսկ ոգևորող չի եղել, կարծես արքան վաղուց է իմացել դրա մասին, և երբ դիմել են իրեն, ինքը տեղեկացնում է: Կորյունի տեքստն է այսպիսին. արքան հանգիստ, շատ խաղաղ **«յայնժամ»**, որ կարծես նաև **«դե, որ այդպես է»** է նշանակում, **«յայնժամ պատմեր նոցա** (եթե կարիք կա՝ այդ դեպքում.- Թ. Տ.) **վասն առն...»** (էջ 90) և այլն:

Ամեն ինչից երևում է, որ Դանիելի մոտ եղած գիրն անսպասելիորեն չի ազդել հայոց արքայի վրա, նա այդ փաստը նույնիսկ կարծես իր հիշողության «դարակների խորքերում» պահած ունեցել է, ու թվում է՝ պարզապես ինչ-որ բանով երանելիներին օգնելու համար է պատմում Դանիելի մասին: Առիթը ներկայացել է, և արքան պատմում է՝ «պատմեր», ու ոչ թե ասում կամ հայտնում. արքայի այս հանդարտ, պատմողական կեցվածքը վկայում է գոնե արքային անակնկալի չբերող, Մաշտոցից առաջ եղած հայ գրի մասին. Դանիելի գտածը Վռամշապուհի համար նորություն չի եղել:

Կորյունն իր տեքստն այսպես է շարունակում. «Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիտ խնդրելին, հայցելին ևս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն» (էջ 92): Մ. Աբեղյանն այս **«յանկարծագիտ»**-ը այսպես է բացատրում՝ «...զյանկարծագիտ», այսինքն՝ Դանիելի պատահաբար գտած նշանագրերը (էջ 11): Գուցե, իրոք, Դանիելը հայ գրերը հանկարծ է գտել, սակայն իմաստն ավելի խորն է. երանելի հոգաբարձուները ստացել են **«խնդրելին»**, **«յանկարծագիտ խնդրելին»**, այսինքն՝ այն, ինչը փնտրված (գրաբարում **խնդրել**-ը նաև **փնտրել**-ն է) է եղել ու հանկարծակի գտնվել է: Այսինքն՝ Դանիելը ոչ թե հանկարծակի ինչ-որ բան է գտել, այլ այն, ինչը որ ընդհանրապես որոնվել է: Հաստատ, «խնդրելին» Դանիելը չէ, որ փնտրել էր գտնելու համար, փնտրել էին հայ քրիստոնյա երանելիները, ու **«յանկարծագիտ խնդրելին»** արտահայտության առաջին բառը Դանիելի, իսկ երկրորդը երանելիների հետ է շաղկապվում: Ու կարևոր մի նրբերանգ. փնտրում են հայտնի՛ն, եղա՛ծը, որը, սակայն, կորել է: Այսինքն՝ երանելի հոգաբարձուները գիտեն, թե ինչ են փնտրել: Հեթանոս մեհյանների սպասավոր քրմերն արդեն չկային, և, ցավոք, ոչնչացվում էր այն ամենն, ինչ հեթանոսական էր, մեհենական գիր ու գրականությունը ևս: Այն-

պէս որ, Դանիելի մոտ եղած հայ գրերը միայն այդ պահին չէ, որ **փնտրված** խնդրելի են եղել, դրանք ոչ միայն խնդրելի, այլև հետապնդելի են եղել, ու հայոց արքայի այն խոսքը, թե Դանիել անունով եպիսկոպոսը հանկարծ է գտել հայ հին նշանագրերը, պարզապէս խուսափելու միջոց է քրիստոնյա հայրերի հավանական այն հարցի պատասխանից, թե եթե ոչ թե հանկարծ, այլ միշտ էլ իմացել են հեթանոսական (անհավատության) գրերի տեղի մասին, ինչու՞ մեզ չես հայտնել: Բայց այս անգամ կարծես թե հին հեթանոս գիրը **խնդրելի** է եղել ոչ թե ոչնչացման նպատակով, այլ իրենց կրոնը տարածելու:

Ուրեմն՝ հին գրերը ո՛չ արքայի համար էին «հանկարծագրուտ», որովհետև Վռամշապուհը վաղուց գիտեր դրանց մասին, ո՛չ էլ երանելիների համար էին անակնկալ, քանի որ փնտրված էին:

Մ. Աբեղյանը, սակայն, այս տրամաբանությունից խուսանավելու համար **խնդրելի**-ն աշխարհաբարի է վերածում իր մյուս՝ ուզել իմաստով, ինչը, մեր կարծիքով, ճիշտ չէ թեկուզև ոճի տեսակետից. տվյալ դեպքում ավելի տրամաբանական է գտնել փնտրածը, որոնածը, քան ցանկացածը, ուզածը: Մենք Կորյունի ենթատեքստում պնդում ենք **խնդրելի** բառի **փնտրած, որոնած** իմաստը, որպեսզի ապացուցենք, որ երանելի հոգաբարձուների համար գրերի խնդիրը միայն ցանկության, ուզելու քարացած հոգեվիճակի մեջ չէ, այլ փնտրտութի, որոնման կոնկրետ գործողության: Այս հանգամանքն ավելի իրական է դարձնում Դանիելի մոտից բերված հայ հին նշանագրերի՝ ինչ-որ ժամանակ գործածված, կիրառված լինելու փաստը, ավելի է արժեքավորում դրանք: Հայ քրիստոնյա հայրերն անպայմանորեն իմացել են, որ հեթանոսական շրջանում այդ գրերն իրոք ծառայել են հայ մշակույթին: Եվ երանելիների՝ Կորյունի հաջորդ տողերում աչքի զարնող գործնականությունը (դրանք միանգամից կիրառելու մտադրության առումով) փաստում է, որ նրանք չէին էլ մտածում, թե հին նշանագրերը գուցե հնարավոր չէ գործածել: Դատելով այն հանգամանքից, որ երանելի հոգաբարձուները անմիջապէս գործի են անցնում՝ գիրը սովորեցնելու համար արքայից մանուկներ խնդրելով, խոսում է այն վստահության մասին, որ իրենց ձեռքին հայերեն նշանագրերն են, և, փաստորեն, որևէ բարդություն, խնդիր չկա դրանք օգտագործելու համար. հենց Հաբելից ստանում են նշանագրերը, միանգամից, միայն պարզապէս տեղեկանալով, ինչպէս գրում է վարքագիրը, անցնում են դրանք սովորեցնելուն: Կորյունը, համենայնդեպս, չի ասում, թե նրանք սկսեցին սովորել բերված գրերը, որպեսզի իրենք էլ մանուկներին սովորեցնեն. «Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել» (էջ 92): Տեքստի շարունակությունը ևս խնդրահարույց է. ...«ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել, որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր, և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք տանէր: Իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս

հայերէն լեզույն, մանավանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ» (էջ 94): Փաստորեն, Մաշտոցը, որ հելլենական կրթություն ուներ և աշխատում էր արքունի դիվանատանը որպէս կրթյալ, ուսյալ մարդ և Դանիելի մոտից բերված հայ հին նշանագրերը բազմաթիվ աշակերտների է սովորեցնում՝ այդ գործում հասնելով վարդապետության, ուսուցչապետի, քարոզչի աստիճանի, ամբողջ երկու տարի, ըստ Կորյունի բնագրի, գլխի չի ընկնում, որ գրերը չեն բավականացնում հայերենի ինչ-ինչ կապերի համար: Պետք է ասել, որ այս **ամս երկու**-ն տարակարծությունների առիթ է դարձել շատ հայագետների համար՝ Մ. Չամչյան, Մ. Օրմանյան, Հր. Աճառյան, Հ. Մանանդյան, Մ. Աբեղյան, Ս. Քոլանջյան և այլք: Եթէ, ինչպէս Կորյունի բնագրում է, Դանիելի մոտից նշանագրերը բերվել են Վռամշապուհի հինգերորդ տարում, և երկու տարի էլ դրանք ուսուցանվել են, ապա տրամաբանական չէ, որ Վռամշապուհի նույն հինգերորդ տարում Մաշտոցը նոր որոնումներ ձեռնարկեր. չէ՞ որ երկու տարի հետո չէր կարող Վռամշապուհի նույն հինգերորդ տարին լինել: Երկու **հինգերորդ**-ներից մեկը, փաստորեն, բնագրային սխալ է: Մեր կարծիքով՝ այս հարցում ճիշտ է Աճառյանի տեսակետը. «Միսալն առաջացել է հետևյալ կերպ: Կորյունի ձեռագրում գրված է եղել երդ (համառոտագրված և առաջին տառի վրա պատվի նշանով), որ բնականաբար պիտի կարդացվեր «երրորդ»: Մի խեղճ գրիչ, վրան պատիվ դրած ե-ը թվանշան համարելով՝ կարդացել է հինգերորդ: Մնացյալը պահել է ճիշտ նախկին ձևով, առանց անդրադառնալու, թե 5+2 չի տալ 5»¹: Մակայն Աճառյանը կարծում է, թե Դանիելի մոտից բերված նշանագրերի պակասությունը երկու տարվա ընթացքում նկատելի Մաշտոցին նույնիսկ պատիվ է բերում, քանի որ շատ ժողովուրդներ իրենց գրերի պակասությունները հասկացել են միայն հազարամյա գործածությունից հետո: Մեր կարծիքով, սակայն, փաստն ինքնին, մեղմ ասած, չի կարող դրական հնչողություն ունենալ Մաշտոցի համար, եթէ, իհարկե, չլինի այլ մեկնաբանություն: Դանիելի մոտից բերված նշանագրերի՝ Կորյունի մատնանշած թերությունը պետք է բացահայտվեր դրանք կիրառելու առաջին իսկ օրից, շաբաթից, որովհետև հնարավոր չէ սովորեցնել մի բան, որը հնարավոր չէ սովորել: Ըստ երևույթին՝ այստեղ զգալ է տալիս Կորյունի տեքստի շարադրանքի և շարադրանքի նյութի ժամանակային հեռավորությունը. այստեղ է, որ **տեքստի և իրականության** (որ տվյալ պահին է) **«հորիզոնական» փոխհարաբերության խնդիրը** ինքնաբերաբար հանգում է նաև **տեքստի և ժամանակի «ուղղահայաց» փոխհարաբերության խնդրին**: Մաշտոցի աշակերտի տեքստը մի պարբերության մեջ տրամաբանականության այնպիսի հարցեր է հարուցում, որոնք ստիպում են կասկածել

¹ Աճառյան Հ., Մերոպ Մաշտոց // «Էջմիածին», 1955, թիվ 2, էջ 14:

հենց շարադրանքի փաստական անվերապահությանը: Եթե բերված այբուբենի մեջ ինչ-որ բան այն չի եղել, ապա խոսքը, թերևս, համեմատաբար ավելի անկարևոր բաներին պետք է վերաբերեր, որպեսզի ընդունենք այն փաստը, որ լեզվի մեջ հմուտ Մաշտոցը երկու տարի չի նկատել դա և երանելի հոգաբարձուների հետ Դանիելի մոտից բերված այբուբենը սովորեցրել է բազմաթիվ աշակերտների, սովորեցրել ամենուրեք: Գիտնականներից ոմանք (Իսահակ Հարությունյան¹) փորձեցին գրաբարյան *աւ*-ը ներկայացնել որպես բնագրային թերություն. իբր, ոչ թե *աւ* է եղել, այլ *աւիս*, այսինքն՝ երկու ամիս են սովորեցրել հին այբուբենով: Սակայն բնագրային նման սպրդման ոչ մի հիմք չկա՝ բացի ենթադրությունից: Իսկ այն հանգամանքները, որ հիշյալ նշանագրերով սկսել են սովորեցնել բազում մարդկանց և **ամենայն ուրեք**, որ այդպիսով Մեսրոպը վարդապետության աստիճանի է հասել, ստիպում են մտածել, որ **սիւղոբա**-կապերին առնչվող թերություններն այնքան էլ էական ու վճռորոշ չեն եղել: Այս տրամաբանությամբ փրկվում է Մաշտոցի հեղինակությունը. Դանիելի մոտից բերված այբուբենն աչքի չի զարնել էական թերությամբ, այլապես Մեսրոպն անպայման վաղ կարձանագրեր դա: Իսկ եթե այդ այբուբենն էական թերություններ չուներ, արժե՞ր այն մի կողմ դնել:

Մ. Աբեղյանն իր «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» ուսումնասիրության մեջ անընդհատ փորձում է վանել, շրջանցել, մերժել այն գաղափարը, թե Դանիելի մոտից բերված գրերն իրոք հին հայկական այբուբենն է եղել: Ցավոք, պատվելի հայագետը այդ նպատակին հասնելու համար շրջում է նաև Ղազար Փարպեցու տեքստը՝ «**մանաւանդ թե գոն նշանագիրք հայերէն լեզույս**» (էջ 15): Մ. Աբեղյանը *թե*-ն դարձնում է *էթե* (մանավանդ *էթե* կան հայերենի նշանագրեր), որպեսզի մերժի ըստ Փարպեցու՝ Մաշտոցի մտորումը, թե մանավանդ կան հայերեն լեզվի նշանագրերը, որոնցով «հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց և կանանց...»: Փարպեցին, ինչպես ասում են, սևով սպիտակին գրում է, որ շատ ժամանակ Մաշտոցը մտածում էր, թե ասորերենով հնարավոր չէ քարոզել, համոզել, և այդ պատճառով նրա անձը «**փղձկացեալ**», այսինքն՝ տխուր էր, վշտահար, «**մանավանդ թե գոն նշանագիրք հայերէն լեզույս**» (մանավանդ որ կան հայերենի նշանագրերը), որոնցով հնարավոր է («**հնար է**») «**շահել զոգիս**»: Մեկ այլ տեղ Փարպեցին գրում է, թե Մաշտոցն աստվածային շնորհով կամեցել է «**կարգել զվաղնջուցն գրեալ շարագիրս տառիցն**» (էջ 15), այսինքն՝ Մաշտոցը ցանկացել է կարգավորել վաղնջագույն ժամանակ գրված տառերի շարագրերը: Մ. Աբեղյանը պնդում է (և ճիշտ է անում), թե Փարպեցու խոսքը Դանիելի մոտից բերված տառերի մասին է, բայց այստեղ էլ հակասության մեջ է ընկնում հենց Կորյունի հետ, որովհետև Մաշտոց-

¹ Տե՛ս **Հարությունյանց Ի.**, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 170:

ցի աշակերտի տեքստից երևում է, որ ուսուցչապետը պարզապես հրաժարվել է Դանիելի մոտից բերված հայ հին նշանագրերից: Ու եթե այդ կարևոր կապ-**սիւղոբաները** չեն բավարարել այնքան, որ բերված գրերից հրաժարվելու անհրաժեշտություն է առաջացել, ապա ինչու՞ է Մաշտոցը սկսել դրանք կարգել-կարգավորել: Մ. Աբեղյանն ինքն էլ, կարծես այնքան էլ չհավատալով իր փաստարկներին, այնուամենայնիվ ստիպված գրում է. «**Այս ամենով, հարկավ, չի մերժվում, որ Մեսրոպյան գրերից առաջ փորձած լինեին գրել կամ նույնիսկ գրած լինեին որևէ բան հայերեն լեզվով, բայց այլ լեզուների նշանագրերով**» (էջ 16):

Մ. Աբեղյանը կարծես ամեն կերպ ուզում է միմյանցից հեռացնել Դանիելի մոտից բերված հայ հին, վաղնջագույն տառերն ու այն այբուբենը, որը հետո, ըստ ընդունված տեսակետի, Մաշտոցն է հայտնագործել: Երբ դրանք նույնացնում ենք, ամեն ինչ զուլալվում է: Բերված տեքստային հատվածների տրամաբանությունն ասում է, որ Մաշտոցը բացահայտել է Դանիելի մոտից բերված հայկական հին նշանագրերի հնչույթային տիրույթները, ըստ դրանց դասակարգել է, նորոգել վաղնջագույն հայերեն նշանագիր-տառերը:

Տրամաբանականության առումով անհասկանալի է նաև հետևյալ տեքստային հատվածը. Կորյունն ասում է, որ հիշյալ խնդրի համար Մաշտոցը արքայի հրամանով մանկանց մի դաս է վերցնում և իր հետ տանում ասորիների քաղաքները. «Վասն որոյ (ստեղծված իրավիճակից էլք փնտրելու համար - Թ. Տ.) առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի և միաբանութեամբ սրբոյն Մահակայ... խաղայր գնայր...» (էջ 94): Արդյո՞ք նոր գրեր ստեղծելու համար Մաշտոցն իր հետ աշակերտներ պետք է տաներ: Դժվար թե: Ուրեմն՝ ճամփորդության նպատակն այլ է եղել. աշակերտներին Մաշտոցն իր հետ տարել է, որպեսզի, թերևս, կատարելագործեն օտար լեզուների իմացությունը՝ թարգմանություններ կատարելու համար: Ուրեմն՝ Մաշտոցը վստահ է եղել, որ գրերի խնդիրն անպայման հաղթահարելի է, և շուտով թարգմանական գործի հերթն է հասնելու: Ասել է թե՛ կապերի-սիւղոբաների խնդիրն այնքան էլ դժվար հաղթահարելի չի եղել, և Դանիելի մոտից բերված այբուբենի թերությունը, պակասությունը գոնե այնքան ոչ էական են եղել, որ թույլ է տվել այն ուսուցանել երկու ձիգ տարի: Ասել է թե, հակառակ Աբեղյանի, Փարպեցու գրքում Մաշտոցի մտորումը (մանավանդ որ կան՝ **գոն**, հայերենի նշանագրեր) պետք է եղած լինի հաստատական իմաստով և ոչ թե ենթադրական («եթե»):

Արժե ուշադրություն հրավիրել Կորյունի «հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի» տեքստային հատվածի վրա:

Մ. Աբեղյանը **նորոգ**-ը աշխարհաբարացրել է **նոր** իմաստով: Ինչու՞: Բնականաբար սա վրիպում չի կարելի համարել, որովհետև Մ. Աբեղյանը **նոր**-ի և **նորոգ**-ի իմաստային նրբերանգները քաջ է գիտակցել: Յավոք, մեծ հայագետը նախատրամադրվածություն է ունեցել, թե Մաշտոցը բոլորովին նոր գրերի ստեղծող է ու **նորոգ**-ը **նոր** է աշխարհաբարացրել: Ճիշտ է, **նորոգ**-ն

ունի և՛ նոր, և՛ նորոգված, և՛ ստույգ, անվրեպ, ճիշտ իմաստները, սակայն Կորյունի տեքստից թելադրվող տրամաբանությունը, կարծում ենք, պահանջում է նորոգ-ի ստույգ, ճիշտ, անվրեպ¹ իմաստները: Այս վերջին երեք իմաստներն ավելի ներդաշնակ են Կորյունի տեքստում եղած տեղեկությունների միջոցով մեր առաջադրած տրամաբանությանը. Մաշտոցը կարողացել է ճիշտ, ստույգ, անվրեպ նորոգել Դանիելի մոտից բերված նշանագրերը: Աբեղյանի կարծիքով, սակայն, Մաշտոցը բոլորովին նոր գրեր է ստեղծել:

Կրկին անդրադառնանք տեքստային այս հատվածին. «Իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզույն, մանավանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային...»: Աբեղյանն աշխարհաբարացրել է՝ «Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերէն լեզվի սիւղոբաները - կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապէս ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին, - ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի էլք էին փնտրում դրան» (էջ 94-95): Մեծ հայագետը կոպիտ սխալ է թույլ տալիս՝ արձանագրելով, թե «Կորյունի գրածից իմացվում է միայն, որ այդ նշանագրերը բավական չեն եղել հայերէնի համար, բավական չեն եղել մանավանդ այն պատճառով, որ այլ ուրիշ (կամ՝ ուրիշների) դպրությունների են եղել, այն էլ մոռացության տրված («թաղեալք») և նորից հիշված («յարուցեալք»): Ուրեմն՝ այդ տառերը հատկապէս հայերէնի համար չեն հորինված եղել» (էջ 12): Կորյունն ասում է՝ ուրիշ դպրություններից թաղված են եղել, Աբեղյանը, բնագիրը ճշգրիտ թարգմանելով իսկ, իր տեսական աշխատության մեջ, սակայն, ցավոք, պնդում է, որ գրերն «այլ ուրիշ ազգերի դպրության են եղել», այսինքն՝ պատկանել (էջ 13): Մ. Աբեղյանը երկրորդ անգամ է միտվածորեն մեկնաբանում տեքստային պարզ հատվածը և դա անում է, որպէսզի Մաշտոցին վերագրի միանգամայն նոր այբուբենի ստեղծումը և ոչ թե Դանիելի մոտից բերված հայկական հին նշանագրերի **ստույգ, ճիշտ, անվրեպ** վերծանումն ու նորոգումը:

Գրերի խնդիրը քննող յուրաքանչյուր լուրջ հեղինակ դրան անքակտելիորեն շաղկապել է մեր ժողովրդի պատմության քաղաքական խնդիրը:

Հայերս 301-ին չէ, որ քրիստոնյա դարձանք: Մենք երդվյալ քրիստոնյա չէինք նաև դրանից 100 տարի հետո: Իսկ այդ ընթացքում Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև և կորցրեց անկախ պետականությունը (387 թ.): Վտանգ առաջացավ, որ ժողովուրդը ժամանակի ընթացքում կարող է ուժվել և վերանալ: Ինչ-որ մի բան էր անհրաժեշտ հային,

¹ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Երևան, 1979, հ. 2, էջ 446, **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. Գ, էջ 480:

որպեսզի կարողանար ոտքի կանգնել: Դա ինչ-որ մի նոր, հզոր հոգևոր ներուժ պետք է լիներ, որը կուտակելու նախապայմաններից ամենակարևորն էլ եղավ քրիստոնեությունը: Հեթանոսական հավատը հոգեբանական նման նախահիմքեր, ներուժ ստեղծել չէր կարող: Հեթանոս մարդը իր շուրջը կատարվող երևույթները պատճառաբանում էր գլխավորապես ու միայն աստվածների **կամքով**. Անահիտը ցանկանա՝ կինը կպտղավորվի, չցանկանա՝ չի պտղավորվի, Նարն ուզենա՝ ծովը չի ալեկոծվի, ու ձկնորսությունը կհաջողվի, իսկ եթե չուզենա, ծովը կալեկոծվի, ու ձկնորսությունը կձախողվի... Այլ կերպ՝ երևույթների, իրողությունների պատճառահետևանքային կապը հեթանոս մարդը փնտրում է իր անձից դուրս, հետևաբար՝ նա չի մտածում, որ ինքն էլ ինչ-որ ձևով կարող է ընթացք տալ իրերին ու իրադարձություններին: Քրիստոնեությունը մի ուսմունք է, որ մարդուն **կամքի ազատություն** է շնորհում, այսինքն՝ մարդը դժոխք կընկնի թե դրախտ՝ կախված է իրենից, այն բանից, թե ինչպես (արդա՞ր, թե՞ մեղավոր) կանցկացնի իր երկրային ժամանակը: Այսինքն՝ քո ճակատագիրը, ըստ քրիստոնեության, դեռևս ոչ թե աստծու կամ աստվածների ձեռքին է, այլ առայժմ, նախևառաջ՝ քո: Նույնը՝ ժողովրդի պարագայում, որևէ ժողովրդի լավ (դրախտ) կամ վատ (դժոխք) վիճակը, ըստ քրիստոնեական մտածողության, կախված է նախևառաջ հենց իրենից: Հայերիս անհրաժեշտ էր հավատ «դրախտի» հեռանկարի նկատմամբ: Որպեսզի ազգի մեջ այնպիսի հոգեբանություն արմատակալեր, թե իր ճակատագիրը նախևառաջ հենց իրենից է կախված, անհրաժեշտ եղավ հոգեկերտվածքի վերափոխություն՝ քրիստոնեական մտածողության, բայց, առաջին հերթին, հոգեբանության օգնությամբ, քանի որ խոսքը քրիստոնեական կրոնի մասին չէ, այլ նախ հավատի: Որպեսզի հայը մտածեր, որ դեռ ինքը կարող է պայքարել իր տեսակի հարատևման համար, և որ դեռ իր ձեռքին է սեփական ճակատագիրը տնօրինելու հնարավորությունը, մեր քաղաքական առաջնորդները որոշեցին ազգի մեջ նման հոգեբանություն ներարկել: Եվ «Աստվածաշնչի» թարգմանությունն էլ մեզ նախ դրա՝ համար պետք եղավ: Եվ հենց թարգմանելու համար էր, որ առաջացավ գրի կարիքը: Ահա թե ինչու խիստ օրինաչափ է, որ հենց այդ ժամանակ, հենց հայոց արքան ինքը և կաթողիկոսը գլխավորեին այդ գործը: Ինչ խոսք, պարզ է, որ Վռամշապուհի, Մահակ Պարթևի, Մեսրոպի մեծագույն ծառայությունը Հայաստանին ու հայ ժողովրդին ոչ թե տառեր ստեղծելն է, այլ նախևառաջ այն իմաստուն կռահումն ու դրա իրականացումը, որ ժողովրդին անհրաժեշտ է մի այնպիսի հոգեբանական նկարագիր, որը նրա յուրաքանչյուր անդամին մտածել տա, թե ազգի ճակատագիրը կախված է նաև իրենից, և ամեն հայ ինչ-որ քայլ կատարի այդ ուղղությամբ: «Աստվածաշնչի» հայագիր թարգմանությունը ժողովրդին տալն էր ապահովելու դա: Ահա, համառոտ սա է եղել հայերիս՝ քրիստոնեության ընդունման իրական մղումների ընդհանուր հայտարարն ըստ մեզ: Ահա թե ինչու ոչնչով չի նսեմանա Մեսրոպ երանելու կերպարը, եթե վերջապես պարզվի, որ նա ոչ մի այբուբեն էլ չի ստեղծել, այլ

նախաքրիստոնեական մեր մշակույթի փշրված բաժակում մնացած վերջին կաթիլը՝ վաղնջագույն գիրն է *ստույգ, ճիշտ, անվրեպ* լրացրել, դասավորել և վերակենդանացնելով՝ վերստեղծել: Իսկ սա քիչ չէ Մաշտոցին սրբերի շարքը դասելու համար:

Մեկ ուրիշ ոչ պակաս կարևոր դիտարկում. և՛ գրերը բերելը, և՛ դրանցով կրթելը տեղի են ունենում **արքայական հրամանով**: Կորյունի տեքստային շարադրանքից ենթադրվում է, որ Հաբելն ըստ երևույթին հայաստանցի չէ: Նա ապրում է հայոց աշխարհից դուրս և *մերձավորն* է ասորի Դանիելի, ուստի՝ Վռամշապուհը երևի թե չպետք է կարողանար նրան հրամայել ու դիմել հրովարտակով, իսկ Հաբելը հնարավոր է և չփութար, չշտապեր: Բայց «Հաբելին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց» (էջ 92):

Ի՞նչ իշխանություն է ունեցել Վռամշապուհը մի մարդու նկատմամբ, որն իր երկրի տիրություն չի ապրել, և ինչու՞ Դանիելի մոտ եղած հայ նշանագրերին հատկապես Վռամշապուհն է տեղյակ:

Հարցն իրոք դժվար է գաղտնագրերծել Կորյունի տեքստի տիրություն: Պետք է մտածել, որ Հաբելը, այնուամենայնիվ, եղել է Վռամշապուհ արքայի հրամանների ենթակայության ներքո և հավանաբար հայ է եղել, մանավանդ հստակորեն կատարում է հայոց արքայի հրովարտակը: Հաբելի անձին առնչվող տեքստային հատվածի տրամաբանությունը ևս խոսում է մեր այն ենթադրության օգտին, որ հայ արքայական տոհմը՝ մասնավորապես Վռամշապուհը, նրա նախորդները, 301 թ. հետո ամենայն հավանականությամբ միշտ էլ տեղյակ են եղել հայ հին նշանագրերի գտնվելու վայրին, ավելին՝ այդ նշանագրերը պահվել են գաղտնիության պայմաններում ու անպայման **միայն արքայական հրաման-հրովարտակներն են գործել դրանց առնչությամբ**: Ամենայն հավանականությամբ՝ Մաշտոցից առաջ Հայաստանում եղած հայ գիրը բարձր դասի մենաշնորհն է եղել՝ արքայական տոհմի և կրոնավորների (խոսքը, իհարկե, առաջին հերթին հեթանոսական հավատքի քրմերի մասին է) և հետո միայն ինչ-ինչ առումներով՝ քրիստոնեության սպասավորների: Թերևս այս պատճառով էլ իմաստ չունի Դանիելի մոտից բերված հայ հին նշանագրերի նմուշներ փնտրել, օրինակ, արձանագրությունների տեսքով՝ քարերի վրա, հեթանոսական տաճարների որմերին, այլուր: Իսկ թե գիրն ինչու էր բարձր դասի մենաշնորհը, պարզ է. այն գիտելիքի, կրթության կրողն էր, իսկ գիտելիքը, կրթությունը, զարգանալու մենաշնորհը, իրոք, բարձր դասին են եղել թեկուզև այն պատճառով, որ օգտագործվել է իշխելու համար:

Կորյունի տեքստի կարևոր հատվածը գրքի վերնագիրն է՝ «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին» (էջ 70): Տրամաբանությունը ստիպում է հարցնել, թե ինչու հայ գրերի գյուտի, այդ հայտնագոր-

ծուրթունքը կատարող (ըստ ընդունված տեսակետի) մարդու գործունեության մասին պատմող գրքի վերնագիրը վերջինիս ոչ թե այբուբեն ստեղծող, այլ միայն **թարգմանիչ** է անվանում: Վերնագրի տեքստում հիշատակվում են անգամ Մաշտոցի վարդապետական աստիճանը, տեքստային այդ կարևոր, կարելի է ասել գլխավոր հատվածում չի անտեսվում նրա նույնիսկ կրտսեր աշակերտի նույն աստիճանը: Իսկ Մաշտոցը միայն թարգմանիչ ու երանելի սուրբ վարդապետ է անվանվում: Գրքի վերնագիրը մանավանդ այն ժամանակներում ողջ գրքի բովանդակությունը ներառող տեքստային կարևոր միավոր է եղել: Իսկ Կորյունի գրքի վերնագրի մեջ, փաստորեն, բացակայում է Մաշտոցի՝ հայոց գրերի ստեղծող լինելու մասին տեղեկությունը: Ուրեմն՝ այս փաստը ևս պետք է դնել այն տրամաբանական շղթայի մեջ, որ առաջ ենք քաշում. հայ գրի սկզբին վերաբերող պատմական իրականության և Կորյունի վարքագրության տեքստային իրականության միջև որոշ անհամապատասխանությունները տրամաբանվում են այն ենթադրությամբ, որ **այսօրվա մեր այբուբենը, ըստ էության, հայոց հին գիրն է՝ Դանիելի մոտից վերստին տուն բերված:**

Тадевос Тоноян – *Текстуальная и историческая реальность: Кориюн*

Об одном из самых важных событий в истории армянского народа – создании алфавита – сохранился только один текст, написанный очевидцем: «Житие Маштоца» Кориюна. Степень соответствия информации, содержащейся в «Житии Маштоца», исторической реальности может быть выявлена исключительно в канве текстуальных реалий посредством их лингвистического, психологического и логического анализа. Проблема «горизонтальных» взаимоотношений текста и реальности неуклонно приводит и к проблеме «вертикальных» связей времени и текста. Текст ученика Маштоца вызывает логические вопросы, заставляющие засомневаться в фактической объективности изложенного и предположить, что алфавит современного армянского языка, по сути, – древнее армянское письмо, сохранившееся у Даниэля и возобновленное Маштоцем.

Tadevos Tonoyan – *Textual and Historical Reality: Koryun*

Only one text has been preserved written by a witness, Koryun – “The Life of Mashtots” regarding the issue of creation of the alphabet, which was one of the most important events in the history of Armenia. The degree of compliance of textual information with the historical reality of the text can be revealed within textual reality through linguistic, psychological, logical analysis of the text. The problem of the «horizontal» relationship of the text and reality is automatically reduced to the “vertical” relationship of the text and time. The text of Mashtots’s pupil raises such logical issues, which raise doubts on the factual unconditionality of the writing and make us assume that the present day Armenian alphabet is, in fact, the old Armenian alphabet, which was brought back home from Daniel.